XX

ՀԱԿՈԲ ՏԻՎՐԻԿՅՈՒ ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆԸ[1] (XVIII Դ.)

Հակոբ Տիվրիկցու կյանքից մեզ շատ բան հայտնի չէ, նրա կենսագրության առանձին տեղեկությունները պահվել են ստորև հրատարակվող իր կազմած տարեգրության մեջ։ Վերջինիս տվյալներով Հակոբը ծնվել է Տիվրիկ քաղաքում[2] 1738 թվի փետրվարին։ Չորս տարեկան հասակում մահտարաժամի հետևանքով, ինչպես գրում է ինքը, զրկվում է ծնողներից, քրոջից, և մնում տատի խնամքի տակ։ Հայտնի չէ, թե երբվանից է սկսել ուսանել, սակայն, ինչպես գրում է հեղինակը, երեք տարի ուսանել է տեղի տիրացու Հարությունի մոտ։ Այնուհետև, երեսուն տարեկան հասակում՝ 1768 թվին ամուսնացել է։ Հակոբը 1777 թվին գնում է Կ. Պոլիս, այնտեղ մնում մինչև 1780 թվի կեսերը և ապա վերադառնում իր ծննդավայրը։

Տարեգրությունն առաջին անգամ հրատարակել է Գ. Սրվանձտյանը[3], որից և վերցնում ենք մենք։ Տարեգրությունը վերնագիր չունի և սկսվում է իր՝ հեղինակի ծննդյան վկայությամբ։ Այստեղ, 1738 թ. ներքո շարադրված է մոտ քսան տարվա պատմություն, առանց ժամանակագրական նշումների, իսկ այնուհետև, սկսած 1759 թվականից, մինչև 1783 թիվը[4] հաջորդաբար թվում է յուրաքանչյուր տարում կատարված նշանավոր դեպքերը, որոնք տեղի են ունեցել Տիվրիկում և նրա շրջակայքում։ Այս վկայությունների մեջ կարևորն այն է, որ հեղինակն ուշադրություն է դարձրել ոչ միայն արտաքին երևույթներին՝ պատերազմներին, ասպատակություններին, այլև մի քաղաքի ներքին կյանքին, ժողովրդի վիճակին, նրա իրավական և տնտեսական դրությանը, հաճախ հաղորդելով նույնիսկ առանձին տեղեկություններ շուկայական հարաբերություններից։ Տարեգրության մեջ զգալի տեղ է գրավում 1777 թ. դեպի Կ. Պոլիս հեղինակի կատարած ճանապարհորդության նկարագրությունը, որը խիստ ուշագրավ է ոչ միայն տեղանունների, այլև XVIII դ. այդ վայրերի տնտեսական վի-

---

[1] Թեև տարեգրության առաջին տողերում հեղինակը հաղորդում է իր անունը, սակայն, չգիտենք ինչու, պրոֆ. Լեոն այս տարեգրությունը համարում է անանուն («Հայոց պատմություն», հտ. 3, Երևան, 1946, էջ 967)։

[2] Տիվրիկը գտնվում է այժմյան Սվասի վիլայեթում, Կունգալ-Իրմակ գետի ստորին հոսանքի վրա, Էրզրում-Կամախ-Զարա-Սեբաստիա ճանապարհին, Կամախ-Զարա քաղաքների միջև։

[3] «Մասիս», 1885, №№ 3776—3778, էջ 1156—1160, 1178—1181, 1297—1211։

[4] Դարձյալ արդարացի չէ պրոֆ. Լեոն, երբ նշում է, թե այս ընդգրը «ընդգրկում է Սեբաստիայի վիճակի Տիվրիկ քաղաքի 12 տարվա տարեգրությունը» («Հայոց պատմություն», հտ. 3, էջ 742)։

ճակի, ժողովրդի զրաղմունքի վերաբերյալ հաղորդած տեղեկություններով։ Հետաքրքիր է նաև 1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ բնակչության վրա ծանրացած հարկերի նկարագրությունը։ Հակոբ Տիվրիկցին ուշագրավ տեղեկություններ է հաղորդում Կ. Գոլսի մասին, որպես ականատես։ Այս հեղինակի ժամանակագրությունը ուշագրավ է հատկապես այն տեսակետից, որ թուրքական բռնապետության պայմաններում, համեմատաբար խաղաղ մի փոքրիկ ժամանակամիջոց, այն էլ թուրքիայի կենտրոնական մասերում, արտացոլվել է այստեղ իր իսկական պատկերով՝ կամայականություններ, բռնություններ, չվերջացող ավազակություններ, իշխանության դեմ ըմբոստություններ, ժողովրդի կեղեքում, տարեկան մի քանի անգամ անօրինական հարկերի գանձում, սպանություններ և այլն։ Կարճ ժամանակ, մեկ տարով, կամ մի քանի ամսով ստեղծված անդորրությունը, կամ մթերքների մատչելիությունը հեղինակը, որ գավառական քաղաքի մի կիսաապահով բնակիչ էր, դիտում է որպես «վերուստ պարգևած» մի բացառիկ երջանկություն։

Տարեգրությունը գրված է ժամանակի խոսակցական լեզվով, ուստի, քիչ չեն թուրքերեն բառերը, նրա նկարագրությունները պատկերավոր են և տպավորիչ. այդ հանգամանքը ցույց է տալիս, որ նա ունեցել է գրելու ձիրք և շնորհք։

Գ. Արվանձտյանի հրատարակության բնագրում հայոց տարեթվերը նշված են հայերեն գլխագիր տառերով, որոնց դիմաց գրված են համապատասխան արաբական թվանշաններ, ըստ երևույթին այդպիսիներն ավելացրել է հրատարակիչը։ Բնագրում մենք, դրա փոխարեն, հայոց տարեթվերի դիմաց, փակագծերում, համապատասխանորեն նշեցինք Գրիգորյան տոմարի տարեթվերը։ Այս հրատարակության բնագրում մասնակի կերպով փոփոխված է կետադրությունը, իսկ բնագրի մեջ, փակագծերում Գ. Արվանձտյանի առանձին նշումները, պահում ենք ծանոթագրությունների բաժնում։

XX

Ի թիւն Հայոց ՌՃՁԷ (1738)[1] ամին ի փետր[ուար] ամսոյն 1156
յաւուր միոջ ծնեալ եմ ես՝ տառապեալ Յակոբս ի յարգանդէ մօր
իմոյ։ Հայրն իմ և մայր սնուցեալ զիս ուրախութեամբ ‖ մինչև 1157
ամս չորիս. յետ այնորիկ բարկութիւն հասեալ յԱստուծոյ մահ
5 սաստիկ անկաւ ի քաղաքիս մերում, յամառն, յուլիս ամսոյ
մէջն[2]. հայր իմ վախճանեալ և մայրն իմ ապրեալ ի վերայ նորա
ոբդով, յետ եօթն աւուր նա ևս մեռեալ, ի ժամանակի երիտա-
սարդութեան իւրեանց, և քոյրն իմ մեռեալ և մանուկ աղայ.
մինչ լրանալ ամսոյն չորս մեռեալ ել ի դրանէ մերմէ, որ ինձ
10 երազի պէս թուի վասն տղայութեան իմոյ։ Շատ երիտասարդ
և շատ մանուկ տղայ մեռեալ, որ զսուգ և զտրտմութիւն քրիս-
տոնէից և այլազնեաց մարդ ոչ կարէ պատմել, ևս առաւել մեծ
նէնէին մերոյ՝ անցուցեալ զգլուխ իւր մազեզէն չուլն, անկեալ ի
մէջ մոխրոյ և թաւալէր ի նմին, վասն զաւակի իւրում անմխի-
15 թար լայր և կոծէր զկուրծս. որքան կենդանի էր ցաւօք և հե-
ծութեամբ անցուցեալ զաւուրս իւր, որ ոչ գտեալ զհնարս, յետ
այնորիկ պահեաց զմեզ վասն մխիթարութեան որդւոցն իւրոց.
և տուեալ զիս յուսումն գրոց ծառայել վարժապետութեան, ի
ձեռն մահտէսի Անտօնի որդի տիրացու Յարութիւնի մինչև երեք
20 տարի։ Եւ ամենաբարին Աստուած պարգևեաց ինձ նշոյլ անհուն
ողորմութեամբն ի չափահասակ եղեալ զուսումն սուրբ գրոց
ճանաչել և ընթեռնուլ։ Եւ նախնիքն մեր պատմէին մեզ անցեալ
յառաջագոյն բազում ժամանակաց եղեալ զիրան, և զվայելչու-
թիւն քաղաքիս, որ զինք լուեալ ի նախնեաց իւրեանց պատ-
25 մէին մեզ անցեալ դաշնս այս։ Եւ այս է դաշն անցեալ բազում
ժամանակաց. զի նստեալ ի քաղաքի մերում շահ, որ անուամբն
ասի Ահմէտի շահ, զի շէն եղեալ է յայնմ ժամանակի ի քաղաքս
և ի գիւղս. և նստեալ կէօմրիւքճի ի չորս կողմ քաղաքիս, պա-
հեալ զտիւ և զգիշեր, զի եկեալ յայլում երկրէ շատ մէթահ վասն
30 անհուն մարդկանց, և առեալ նոցա զբաժինս իւրեանց, որ խա-
ներն կայ ի բոլոր քաղաքին, քայքայեալ մինչ ցայժմ ժամանակ։
Եւ խաչապաշտ քրիստոնէից ազգին բազումք են եղեալ, եկեղեցիք
նոցա կայ աւերակ աստ անդ, որ զի յանգեալ է այժմուս տեղիս-
տեղիս, և որ կայ ի դէպ յարևելս, անուամբ կառուցեալ ս. Աստ-
35 ուածածնայ հանգեալ եկեղեցի և ունի բարձրագոյն ի ջուր հայեաց
փոքրագոյն բերդ մի. և զնա շինեալ են վասն թագաւորաց պա-

տերաղմաց. և որ կայ ի դէմ Նորա փոքրապարիսպս, որ այժմիս
կոչի Ղալէլեր, ի մէջ Նորա նստեալ բազում մարդիկ որպէս իմա-
բէթ, զի յոյժ գեղեցիկ եղեալ է վայելչութիւն և զշինութիւն, նմա-
նեալ զետ մայրաքաղաք, որ և այս դաշն անցեալանթիւ ժամանա-
5 կաց և հասեալ նախնեաց մերոց, սակաւ տրնւրենուն այսր և անդ
տեղիս քայքայեալ, և որ կոչեն մարդիկ այժմուս զանուն Նորա Մաչ-
կացի, զի տուն եղեալ է քրիստոնէից ազգին, որ մինչև երթայ
ելանէ ի Տիպլէ-խանն, աստուստ և անդուստ շէն եղեալ է երկու
կողմանց։ Պատճառ վասն աւերման քաղաքին և անցեալ իւր-
10 եանց նեղութեան ժամանակին. կրկինս պատմէին մեզ զեղեալ
իրսն, որ զի ժողովեալ մեծամեծ հայ իշխանք քաղաքին խոր-
հուրդ արարին ի հետ այլազգի զապիթներուն, որ զինք զպարտսն
քաղաքին աւելի արարեալ և առնեալ նոցա կերեալ և ոչ ողոր-
մեալ ի վերայ աղքատաց, այլ զրկելով զհոգիս վասն չարու-
15 թեանց. և մինն ի միջոյ իշխանաց նոցա քրիստ«[ն]եայ իրաւա-
խօս և արդարադատ, որ անուամբն կոչի Ջալբխ օղլու Ցարիկ,
որ բազում նեղութիւնս և չարչարանս կրեալ վասն աղքատաց
քաղաքին և վասն վարձուց և բարի գործոց, բազում խռովու-
թեամբ իշխող եղեալ զպարտսն հաշուէր, զի գիտէր յառաջագոյն
20 զխորհուրդս նոցա ի հետ միմեանց։ Եւ չար իշխաններն ժողո-
վեալ և չար խորհեալ վասն քրիստոնէին այն և եղեալ
ի վերայ Նորա չար ՁԼաս և մատնեալ ի զապիթ քաղաքին[3]. և
արկեալ ի բանտ զեղբայրն իւրեանց, յետ Նորա տուեալ զապիթ-
ներուն բազում գանձս, վասն սպանանելոյ այրն այն, յիմարու-
25 թեամբ շարժեալ ոչ ընտրելով զդատաստանն Աստուծոյ, կամայ
և ակամայ առեալ ի ձեռաց զապիթին և հանեալ ի դուռ Նորա և
ձեռօք իւրեանց մորթեցին զեղբայրն իւրեանց, որպէս չար Կա-
յէն։ Եւ յետ Նորա խռովութիւն արարեալ բազում, որ մինչ իմա-
ցեալ Սեբաստիոյ վաշայն և բազում զօրք արձակեալ վասն խռո-
30 վութեան քաղա ‖ քին, և նոցա ոչ գտեալ զհնարս զի պարտք 1158
քաղաքին շատացեալ ե եղեալ հարիւր քէսէ և այլն։ Եւ իւրեանց
այլ ոչ գտեալ հանգիստս վասն հատուցանելոյ զպարտսն, ոմանք
պահեալ ի բանտ և ոմանք ծախեալ զամենայն ինչս և տուեալ
սակաւ ինչ և բազում ոմանք թողեալ զտունս և զմիւլքս և այ-
35 գիս փախեալ յաստ և անդ, որ մինչև գտեալ զհանգիստս իւրեանց։
Եւ զապիթ քաղաքին առեալ զամենայն ինչս նոցա, վասն հատուց-
ման հարիւր քէսէին, քայքայեալ բազում տունս նոցա և յայժ-
մուս այս հողագործքն սերմանեն ցորեան ի յօթևանս նոցա։ Եւ
այս դաշն անցեալ ի թագաւորութիւն սուլթան Ահմէտի և զա-
40 պիթ քաղաքին Հաճի Վէլի, ի նախնեաց մերոց ժամանակին և
մեր հասեալ ի նեղութիւն ժամանակս այս։

Ի թուին Հայոց ՌՄԸ (1759) ի գարնան ամենաստեղծն
Աստուած սաստիկ բարկացաւ ի վերայ քաղաքին և անկեալ սով
սղութեան, որ մինչ ցորենին քիլէ 50 ղուրուշ ելաւ, զի քաղաքն
45 ամենայն, եթէ այլազգ և եթէ քրիստոնեայ, թէ այր, թէ կին
անկեալ ի լերինս բանջարով և ուրիշ անուշահամ խոտով շատա-

նային։ Զորացեալ և անպտուղ միյտանն, որ կայ մինչ ցայժմ, նոյն տարին, հրամանաւն Աստուծոյ, զարդարեալ կարմիր ծաղկօք և այլ զանազան անուշահամ խոտով, որ բազում մարդիկ նովաւ մխիթարէին։ Վասն յոյժ սաստիկ սովոյն հացագործքն ոչ գոր-
5 ծեն զհաց, զի ոչ գոյր ցորեան. ողորմութեամբն Աստուծոյ նոյն ժամանակին եկեալ յայլ երկրէ սակաւ խոշոր կորեկ, զի յայժմուս կոչի կըլկրլ կորեկ, զնա առնէին հացագործքն և խառնէին մոխիր ընդ իրարս և տային փոքրածակէ ի դուրս վասն ամբոխին մարդկանց. զի ով ոք հանճարեղութեամբ խլէր, նորա էր, և մեր ազ-
10 գին բնաւ ոչ տային, ևս առաւել խլէին ի ձեռաց նոցա. բազում մարդիկ երթային մինչև ցերեկոյ պահէին, ոչ կարէին սակաւ հաց առնէին, ոմանք սովամահ մեռանէին և շատեր պարտական եղեալ և բազում ոմանք գնացեալ յօտար երկիր հեռի։ Եւ վասն խեղճութեան քաղաքին շրջէին տնէ տուն հացագործքն՝ գտանելոյ
15 զցորեանն և զալուրս՝ բռնութեամբ առեալ տանէին։ Բոլոր տարի մի այսպէս խեղճ և ողորմելի եղեալ։ Ի նոյն տարւոջ եկեալ մեծ տէտէս Պոլիսու գնաց քառասուն ղուռուշի քիլէ մը ցորեն գնեց և պահեց մեզ սովամահէն։ Յետ այնորիկ ողորմեցաւ ամենափրկիչն Աստուած իւր անհուն առատ ողորմութեամբ, որ զի շու-
20 տով իջաւ լիութիւն, որ մինչև ցորենին քիլէն 3 ղուռուշ իջաւ։ Թագաւորութիւն սուլթան Օսմանին և զապիթ քաղաքին մեր Հաճի Վէլի և խարճն քաղաքին էր սակաւ։

ՌՄԹ (1760) տարւոյն խաղաղութիւն, շէն, ի քաղաքիս և ի գիւղօրայս լցեալ ամենայն բարութեամբ, ի առևտուրս կատա-
25 րեալ առատապէս. և ձմեռն եղև հանդարտ. և ի դարնան յապրիլ ամսոյ աւուրն Նոր կիրակիի՝, ի լոյս հանեալ առաւօտուն, մեկ ժամ ձիւն եկաւ յերկնից սաստիկ և բազում նստեալ ի վերայ երկրի, և մեծ մարդկանցն զարմացեալ և չափեալ մինչև կանգուն մի, ասէին թէ ոչ տեսաք այսպիսի իրք, վասն այն ծաղ-
30 կեալ և զարդարեալ էր պտղաբերեալ ծառերն ի վերայ երկրի զանազան ծաղկօք և անուշահամ հոտով, վասն սաստիկ բարկութեան ցրտոյն թափեալ, վասն այնորիկ և պտուղն եղև սակաւ։

Նոյն տարին ըմբռնեալ անօրէն և թշնամի չար անուամբ Ճրվիկ օղլին, որ հակառակ էր ի հետ քաղաքին և ունէր բազում
35 զօրս, և այլազգիքն պատերազմեալ և բերեալ անօրէնն և դրեալ ի զնտան. և նա արուեստագործ, որպէս սատանայ, կտրեալ զերկաթ պատուհանին, որ կայ մինչև ցայսօր բարձրագոյն տեղիս ի պարիսպն բերդին, անկեալ վերէն մինչև ի վայր և փախեալ. նոյն ժամուն որոտումն եղեալ վասն նորա, բազում մարդիկ գնացեալ
40 զհետ նորա և ոչ ըմբռնեալ, և խռովութիւն եղեալ այլազգաց զհետ միմեանց, վասն փախչելոյ նորա։

Եւ ի նոյն տարին շինեցին զխան, որ կայ ի գլուխ չարշուին, որ այժմուս ասի Նոր խան։

Թագաւորութիւն սուլթան Օսմանին և զապիթ քաղաքին
45 մեր Հաճի Վէլին. և ցորենին քիլէն 4 ղուրուշ և բամբակին օխան 20 փարայ և եղին օխան 12 փարայ և պանիրին օխան 4 փարայ։

ՌՄՃԺ (1761) ամին լիութիւն և առատութիւն։ Սուլթան Օսման մեռեալ և սուլթան Մուսթաֆայ ի թախտն նստեալ և խապարն տարածեալ յոլորտս տիեզերաց || ուրախութիւն եղև 1159
ամենայն երկիր։ Եւ ի գարնան սակաւ չար թշնամի ե կողոպ-
5 տիչ կար և թագաւորն իմացեալ հրամայեաց հրովարտակօք յա-
մենայն գաւառս իւր, թէ ուր ուրեք գտանիցի կողոպտիչ, կո-
րուսցեն զանուն նոցա չար սատակութեամբ։ Եւ ի սոյն ամառն
եկեալ սակաւ թշնամի ի մեր քաղաքն և զապիթ քաղաքին ըմ-
բրոնեալ զնոսա և լցեալ ի մէջ դարբիններուն խանութին, վասն
10 սպանման նոցա և նոքա փախեան յաստ և անդ, ոչ ոք կարաց
հնարս դառնել և խեղդեցին և լցին ի մէջ ձորին։ Եւ նոյն ամառն
անձրե եկեալ բազում անգամ ջուրն տարեալ զանօրինաց լէշերն
կորոյս։ Եւ ի նոյն ամառն ելեալ երկրէ բազում և անթիւ մանր
պէօճէք շրջէին ի վերայ երկրի, որպէս մրջուն ամենայն տեղիս,
15 կեցեալ ղերիս ամիսս և բնաջինջ եղեալ։ Եւ ի նմին տարւոջ
սերմանեալն ցորեանն բազում, ի հնձոց ժամանակին լիութիւն
եղև, որ քիլէն 4 ղուրուշ տային։

Եւ նոյն ամառն եկեալ ի մայրաքաղաքէ արուեստագործ
ճանբազ, գզրգուն եղե քաղաքն ամենայն, և նոքա պէս պէս
20 արհեստեօք և զարմանալեօք խաղային և շրջէին ի վերայ պա-
րանին։ Թագաւորութիւն սուլթան Մուսթաֆային և զապիթ
քաղաքին մեր նոյն տարին փոխարկեալ ե եղեալ Հաճի Օսման։
Եւ խարաճ քաղաքին էր սակաւ ե ամենայն բարեաց լիութիւն
և շէն ի քաղաքս և ի գիւղս։

25 ՌՄԺԱ (1762) ամին ոչ գոյ խաղաղութիւն, զի ելեալ անօ-
րէն ե թշնամին Ղատը օղլուն, ոչ պահելով զպատուէր թագաւո-
րին, ժողովեալ բազում անթիւ զօրք ի վերայ իւր, կողոպտեաց
շատ քաղաքն և շատ գիւղօրայս. և թշնամութիւնն նորա յոյժ
տարածուեցաւ ոլորտս տիեզերաց յամենայն երկիր մինչև
30 Կ. Պոլիս. և ի վերայ նորա եղեալ զօրքն բազում շատ էին. և
ինքն էր հասակաւ կարճ։ Եւ եկեալ հակառակ եղև ի հետ քաղա-
քին, նստեալ ի բոլոր գիւղօրայս, աւերելով և ի յահէ նորա զա-
պիթ քաղաքին խորհուրդ արարին և քրիստոնէից մուհէսսէրէ
պահել տուին եօթ օր և եօթ գիշեր ի դէպ գերեզմանին. և պատ-
35 բաստեալ էին քաղաքն ամենայն վասն պատերազմութեան. և
անօրէն այն ոչ կարաց մտանել, այլ ոխս պահեալ ի սրտի իւ-
րում շրջէր բազում տեղիս աւերելով. և զօրքն նորա շատնային
օր ըստ օրէ։ Եւ ի գարնան եկեալ ի գիւղն Թուղութ, որ է ի մօտ
քաղաքին և ի մէջ ձորին, և այլազգիքն ժողովեալ ամենեքեան
40 գնացին պատերազմ ի վերա նորա, ի գլուխ գիւղին սակաւ մի
պատերազմեցան և թշնամիքն փախեան, վասն ի խոր տեղիս
լինելոյ ոչ կարացին պատերազմիլ, գնացին աւերելով ի կողմն
Մերաստիոյ, հակառակ եղեալ ի հետ քաղաքին. և փաշան պատ-
բաստեալ բազում զօրք կոուեցան ընդ իրեարս և սատակեցին
45 զնա որպէս չար Ցուլիանոս. և ի վերայ նորա իջեալ զօրքն բա-
զում, ոմանք սատակեցան և բազում ոմանք ցրուեցան։ Ի թա-

գավորութիւն սուլթան Մուսթաֆային և զապիթ քաղաքին մեր Հաճի Օսման. և ցորենին քիլէն 4 ղուրուշ և խարճն քաղաքին էր սակաւ։

ՌՄԺԲ (1763) ամին լիութիւն և առատութիւն և ձմեռն
5 եղև սակաւ սաստիկ։ Եւ գարնան ապրիլ ամսոյ միջին աւուր մի օր էր, երեկոյեան խառնակեցաւ յերկինքն ընդ իրարս, շարժումն և որոտումն եղև յոյժ ե ի ահէ նորա սոսկայեալ ոչ զում մարդիկ, վասն սաստիկ բարկութեան յերկնից ահարկու կայծակ իջաւ ի դէպ արևմուտս ի մէջ ծառի միոյ և մարդ ոչ վնասեաց. և բա-
10 զում ամբ ծածկեալ զերեսս յերկնից, ոչ ծագեալ արեգակն, 9 օր ցողեաց զցող ողորմութեան ցորեկ, գիշեր։

Եւ ի նոյն ամառն հանդիպեալ երեք թուղլու փաշայ, որ անուն նորա էր Սառի փաշա և ունէր բազում և անթիւ զօրք և շատ ոսկի և արծաթ, կեցեալ ի քաղաքն մեր եօթն օր, մինչև
15 գարիին քիլէն 20 ղուրուշ ելաւ, վասն անհուն էսքէրներուն շատ և մասրաւ ըրաւ քաղաքին և գնաց։ Յետ այնորիկ զապիթ քաղաքին ժողովեալ քրիստոնէից բազում պարտս վասն հատուցման, շատ ոմանք ոչ կարացին հատուցանել, բազում նեղութիւնս կրեցին նստելով ի բանտ և ոմանց փախեալ ատ և անդ. նոյն տա-
20 րին ցրուեալ մարդիկն բազում գիւղօրէից, այսինքն որ ասի Աշոացիք, վասն պարտուց և վասն անօրէն թշնամի կողոպտողաց, զի եկեալ բազում նեղութիւնս տային և գերէին շատ մարդիկս ե առնէին գանձս որպէս կամէին։ Թագաւորութիւն սուլ-
թան || Մուստաֆային և զապիթ քաղաքին մեր Հաճի Օսման. և 1160
25 ցորենին քիլէն 6 ղուրուշ էր։

ՌՄԺԴ (1764) ամին ձմեռն եղև հանդարտ և ի գարնան յանկարծօրէն եղև սղութիւն, վասն բազում մարդկանց անպատրաստութեան, զի յառաջագոյնս լիութիւն էր, և յետ նորա եկեալ բազում քաղաքաց արապաներով ցորեան ի հնձոց ժամանակին
30 և այլազգեաց ոմանց առեալ և լցեալ խանն, զի բերեալ մարդկանց առնէին, վասն այնորիկ ոչ եղև սաստիկ սով։

Եւ նոյն ամառն թշնամի կար բազում, հակառակ ի հետ քաղաքին, աւերէին գիւղօրայսն և քաղաք ոչ կարէին մտանել։

Եւ ի նոյն տարին խարճն քաղաքին շատացեալ և այլ-
35 ազգիքն ոչ տային պարտս, վասն այնորիկ պատրաստեալ քրիստոնէից գնալ ի Սեբաստիայ. ժողովեալ գնացին մինչ ի գիւղս Զընրսկի [ա]ն զապիթն, մարդ ուղարկեալ և ետ դարձուցեալ, շատ նեղութիւնս տրվեալ և պահեալ ի բանտ։ Թագաւորութիւն սուլթան Մուստաֆային և զապիթ քաղաքին մեր Հաճի Օսման. և
40 ցորենին քիլէն նոյն։

ՌՄԺԴ (1765) ամին կամաւն Աստուծոյ ոչ գոյ խաղաղութիւն ի մէջ քաղաքին, զի ձմեռն եղև սաստիկ և ձիւն եկեալ յերկնից բազում անգամ։ Եւ ի ամառն թշնամի և կողոպտիչ կար ի կողմս մերում, այսինքն լէվէնտ, զի աւերին բազում գիւղօրայս։
45 Եւ զապիթ քաղաքին ժողովեալ զամենայն գունդս իւր, գնացին բացին ի գիւղն Մուրսալ պատերազմեցան ընդ հետ թշնաւոյն

և բերին վեց գլուխս նոցա, և շատ մարդ վիրաւորեցին և բո-
լուքբաշի լէվէնտին աւերեալ բազում տեղիս, որ զինչ գիւղս ի
բոլոր քաղաքին յահէ նոցա փախան եթէ այլազգ է թէ քրիս-
տոնեայ ամենեքեանն օղուլով, ուշաղով, մալով, եկեալ ի քա-
5 զաք կեցան։ Եւ թշնամին այնքան հակառակ եղաւ ի հետ քա-
ղաքին, զի կապեալ էր ի չորս կողմանց ղճանապարհս և ոչ թո-
ղոյր, որ դար քէվրան ի յայլ երկրէ, այլ կողոպտէր և բաղում
ՀԼասս առնէր. և ի հնձոց ժամանակին ցորեան ՀԼայ ի մէյտան
վասն ահէ նոցա. և քաղաքացիքն ոչ դտեալ զինար ի հետ թշնամ-
10 ւոյն՝ շատ երկաթեղէնս, նալ, մըխ, լաթեղէն, քիւրք, հանդերձ
վէշկէշ տվին և հաշտեցան ընդ իրարս։ Եւ պարտք քաղաքին շա-
տացեալ և զուկուրդ քրիստոնէի մարդկանց, է աստ և անդ
ցրուեալ վասն երկրին անխաղաղ լինելոյ։ Թագաւորութիւն սուլ-
թան Մուսթաֆային է զապիթն մեր Հաճի Օսման։

15 || ՌՄԺԵ (1766) ոչ գոյ խաղաղութիւն, զի միաբանեալ բա- 1178
զում լէվէնտ վասն սպանման ընկերաց իւրեանց սասաիկ հակա-
ռակեցան ի հետ քաղաքին. մարդ ոչ կարէր Ուռու ծայր[7] ելա-
նել, զի կապէին, տանէին է շատ նեղութիւն տային։ Շատ դանձս
պահտնջէին որ թող տային. այսպէս բաղում գիւղս աւերեցին,
20 այնպէս որ ասեն Աշուտցիք, որ շատ ցորեն ելանէր ի դեղանէն,
է մարդիկն փախեան ոմանք ի Սերաստիա, ոմանք Ալաճախան,
ոմանք աստ և անդ ցրուեցան։ Եւ զապիթն մեր բերեալ Ղարա-
չորու զաղա[8] շատ, վասն ահէ թշնամեաց։ Եւ ամառնային ժա-
մանակին սերմանեալ ցորեանն լի է առատ էր, է ի հնձոց ժա-
25 մանակին լցեալ էին լէվէնտքն ի գիւղս, յահեանց ոչ կարէր վե-
րակացու շահնանին երթալ ի գիւղս. և քաղաքացիքն խորհուրդ
արարին և զաղաներն, որ եկեալ էին պէօլիւկ պէօլիւկ, արարեալ
պահապանս, ղրկեցին ի գիւղս և պէօլիւկ մի զազա գնացին ի գիւղն
Ղարասար, պատերազմեցան ի հետ թշնամեաց և լէվէնտն սպա-
30 նեց զամենայն զաղաներն, և պէօլիւկպաշի զազաներուն ի մեր
քաղաքէն էր, է զնա ըմբռնեցին, շատ նեղութիւնս տվին և ի
մէջ կրակին այրեցին, և քաղաքացիքն իմացեալ ժողովեցան գնա-
ցին ի վերա նոցա. և նոքա փախեան աստ և անդ։ Եւ հողագործք
որ ոչ կարէին հանել զպատուական ցորեանն, վասն այնորիկ ոչ
35 եղև լիութիւն քաղաքին. քրիստոնեայք շատ պարտք տուին
վասն քաղաքին։ Ի թագաւորութեան սուլթան Մուստաֆային և
զապիթ քաղաքին մեր Հաճի Օսման. և ցորենին քիլէն 9 զու-
ռուշ էր։

ՌՄԺԶ (1767) ձմեռն եղև սաստիկ և ձիւն եկեալ յերկնից
40 բազմիցս. և ի գարնան եղև սակաւ սղութիւն, և մէջ ամառան
կարկուտ և անձրև եկաւ կրկին ևս, և սերմանեալ ցորենն էր սա-
կաւ, զի ոչ դիտէին զկամս Աստուծոյ, այլ չար թշնամիք անօ-
րէնութեամբ շրջեալ կողոպտէին զերկիրս ամենայն և ի հնձոց
ժամանակին տվին՝ լաթեղէնս, երկաթեղէնս, նալ, մըխ և այլն
45 զայս ամենայն տվեալ և հաշտեցեալ ընդ թշնամիս։

Եւ այս տարիս գնաց եղբայրս Պօլիս։ Եւ այս տարիս բար-

կաղեալ Աստուած ի Պոլսոյ, զի յոյժ և սաստիկ և յանկարծակի
շարժումն եղև քաղաքն ամենայն. շատ ահագին քեավկիր պինա
խաներ և բարձրագոյն ճամիներ փլեալ և անհուն մարդիկ ի
ներքև հողին մնայեալ. և ամիս մը այսպէս գիշեր և ցորեկ, ժամ
5 առ ժամ եղեալ և խեղճութիւն նորա տարածեցաւ յերկիրս ամե-
նայն։ Թագաւորութիւն սուլթան Մուստաֆային և զապիթ քա-
ղաքիս մեր Հաճի Օսման. և խարճ քաղաքիս շատացեալ. և ցո-
րենին քիլէն կալոց ժամանակին 10 դուրուշ։

ՌՄԺԷ (1768) ձմեռն եղև հանդարտ, և գարնան եղև լիու-
10 թիւն, զի հաշտեալ էին ի հետ թշնամի լէվէնային՝ վասն հողա-
գործաց, զի երթեալ սերմանեն. և յայլ երկրէ եկեալ շատ քէրվան
առնտուրս || եղև։ Եւ այս տարիս եկաւ մեծ տէտէս Պոլիսու և 1179
ամառնային ժամանակի կարգեց զտառապեալ Յակոբս, և կե-
ցեալ ի բարի ամս 103 տարի, հասեալ ալիք ծերութեան և փո-
15 խեցաւ բարի գործով առ Աստուած. տէր լուսաւորեսցէ իւր ան-
ճառելի լուսով զնոգիս սորին. ամէն։ Եւ այս տարիս անցեալ ի
վերայ մեր այսպէս։

ՌՄԺԸ (1769) ոչ գոյ խաղաղութիւն, զի ձմեռն եղև հան-
դարտ և գարնան եկեալ անօրէն և չար թշնամի Մատաղ օղլուն
20 ութը հարիւր էսկէրով, զի խռովեալ էր ի հետ ամենայն քաղա-
քաց ի կողմն արևելից և կողոպտեալ Հինտու մէթահ քէրվան
բազում մալօք և ապրանօք եկեալ ի քաղաքն մեր և զապիթ քա-
ղաքին պատուէր ավեալ այլազգաց և քրիստոնէից, զի ոչ առնի-
ցեն փարայով զմալս ի ձեռաց թշնամեաց. և այլազգիքն ոչ պա-
25 հեցին զպատուէրս, գնեցին մալս. և չար, անօրէնն այն կեցեալ
6 օր ի մէջ քաղաքին, որ գարիին քիլէն մինչև 20 դուրուշ ելաւ
վասն բազմութեան էսկէրին։ Եւ հետ նորա աւերելով շրջէր ի
կողմն արևելից։ Եւ նոյն ամսոյն խմացեալ Սերասքիոյ փաշային
պատրաստեալ 1000 տէլիպաշի, թային արարեալ ի վերա նոցա,
30 զի ուր ուրեք գտանիցեն պատերազմին ընդ միմեանս։ Եւ տէ-
լիներն կապեցին չորս կողմն լէվէնտին, պատերազմեցան ընդ
իրարս ի կողմն քաղաքին մեր, բազում մարդ սպանեցան ընդ
երկոցունցն. և քաղաքէն մերմէ տվեալ շատ գարի և շատ կե-
րակուր թային վասն աէլիներուն, վասն այնորիկ պարտք քա-
35 զաքին շատացեալ և քրիստոնեայքն ասա և անդ ցրուեալ։ Եւ
յաշնան սղութիւն եղև, վասն զի հողագործքն ոչ կարացին հնձել
ցորեան վասն բռնութեան և դառնութեան ժամանակին, զի քո-
չեցեալ էին բոլոր գիւղօրայքն ի քաղաք։ Եւ այս տարիս կախե-
ցին դզեր Պարոնեանց մահտէսի Յակոբն Տապախանէին կամուր-
40 ջէն վար, վասն դարբիններուն սակաւ գործի համար, որ այնմ
ժամանակի հասեալ եղբարքն գիտացին։ Եւ այլազգքն տեսեալ
վկայեցին, թէ լոյս իջաւ ի վերայ նորա։ Ի թագաւորութեան
սուլթան Մուստաֆային և զապիթ քաղաքին Հաճի Օսման։ Եւ
ցորենին քիլէն 14 դուրուշ և պարտքն քաղաքին շատ, սակաւ
45 քրիստոնէից տվին 9 քէսէ պարտք. և ես տառապեալս տվի սա-

լեան 6 հարիւր ղուրուշ և անդուցեալ տարիս այս շատ նեղութեամբ և վշտաք, վասն ծովացեալ մեղաց մերոց։

ՌՄԺԹ (1770) ոչ եղև երբէք խաղաղութիւն. ձմեռն եղև սաստիկ ցուրտ, անձրևն եկաւ բազում անգամ, սղութիւն եղաւ
5 ամենայն ըարեաց և ապրիլ ամսոյ աւուր երեկոյի միում սահաթ մը անձրև եկաւ սաստիկ առատապէս և Ղրիմպատու լեռնէն շատ ջուր սէլ ելաւ և անկիից ի վայր շատ առն քակեալ և եկեալ ի մէջ չարշրին լըցեալ և քարով, որ հասեալ մինչև յառիքն, ևս առաւել լցեալ ի մէջ խանութներն ջրով, որ զամենայն լաթեղէնս
10 և որ ինչ ամենայն ըռղակս թացեալ ջրով և ճախնով, որ զխըղճութիւն մարգկանց ոչ կարեմ պատմել գրով ընթերցողաց և լսողաց։ Եւ ի մէջ ամառն եղեալ ի դէպ հարաւային կողմէն յերեսս յերկնից նշանաւոր և երկայնաչափ մինչև 6 կանգուն պայծառափայլ լուսաւոր աստղ մը, որ երևէր տեսանողաց ահարկու
15 և զարհուրելի և կայր ի մօտ նորա փոքրակարմրագոյն և կանաչագոյն կրկին աստղ մը, շրջէին ի միասին մինչ ի մէջ գիշերոյ, և մտեալ ի ներքև երկնից. և այսպէս կեցեալ 3 գիշեր և այլ ոչ ելեալ։ Եւ այս տարիս պատրաստեալ սուլթան Մուստաֆա պատերազմ ի հետ Մոսկոֆին՝, խարար ուղարկեալ ոլորտս տիե-
20 ղերաց իւրոց, վասն զօրու, զի գնասցեն պատերազմ թագաւորին. խառնակում էր ամենայն տեղիս ևս առաւել ի մեր քաղաքն. զի յոյժ նեղէին զքրիստոնեայ ազգն, վասն ինչքի և այլ չար գործի համար։ Եւ այս տարիս այսպէս անցեալ վասն մեղաց մերոց։

25 ՌՄԻ (1771) ոչ եղև խաղաղութիւն յամենայն տեղիս, վասն պատերազմի թագաւորաց, զի հրաման թագաւորին սաստիկ էր ոլորտս տիեղերաց։ Եւ բազում զօրք կայր ի վերայ երկրի և լէվէնտ թշնամի հ..կառակ մեր քաղաքին և զապիթն ժողովեալ զամենայն գունդս գնացին պատերազմեցան ի դուրս քաղաքէն,
30 բերեալ սակաւ գլուխ և մարդ, և զմարդսն կախեալ. ե այլազգիքն որ ոչ երթային սէֆէր, վասն լէվէնտնուն համար և թշնամիքն օր ըստ օրէ շատնային։ Եւ ամառնային ժամանակի եկեալ Պոլսոյ զապիթ Դուռնաճի պաշի՝ զո ||՝ մանս սէֆէր խրկեց և զոմանս 1180
սպաննեց և զոմանս զապիթ արար, տարի մը այսպէս։ Եւ ամառն
35 եկեալ եղբայրն իմ ի Պոլսոյ։ Եւ պարտք քաղաքին շատացեալ և քրիստոնեայքն աստ և անդ ցրուեալ, զի ոչ գոյր վաստակ որ ջանային զպարտսն հատուցանել, վասն այնորիկ նեղութեամբ անցունէին տարիս։

ՌՄԻԱ (1772) ոչ գոյ երբէք խաղաղութիւն երկրիս ամե-
40 նայն, զի պատերազմ թագաւորաց սաստիկ էր. ամէն շարաթ մէնղիլ դար քաղաքէ ի քաղաք վասն մարդկանց, զի երթեալ պատերազմեսցին. և շատ անօրէն լէվէնտ կայր ի մեր քաղաքն, վասն սպանման ընկերաց իւրեանց աւերէին բազում գիւղօրայս։ Եւ ամառնային ժամանակին, վասն ծովացեալ մեղաց, ոչ ցօղեաց
45 անձրև, զի յոյժ խորշակտհար եղև սերմանեալն ցորեան, վասն տօթոյն արեգական, և հողագործքն ոչ ունէին հանգստութիւն ի

գեօղս իւրեանց, այլ երերեալ շրջէին ասա և անդ, վասն այնորիկ
եղև սղութիւն ամենայն բարեաց, զի ոչ գայր քէվրան յայլ
երկրէ վասն ահին Թշնամեաց։ Ցորենին քիլէն 10 ղուրուշ։

ՌՄԻՐ (1773) ոչ դոյ երրէք խաղաղութիւն երկրիս ամե-
5 նայն, զի սաստկանոյր սէֆէր տարոց տարի։ Եւ քաղաքն մեր
յոյժ ձմեռ եղև, որ մինչև՛ ի գարնանային ամսոյ ձիւն եկաւ շատ
անգամ և ամառնային ժամանակի անձրև եկեալ առատապէս, և
լէվէնտներուն հետ հաշտեցան հողագործաց համար. զի խառնա-
կում էր ընդ իրարս ամենայն տեղիս։ Թագաւորութիւն սուլթան
10 Մուստաֆային, զապիթ քաղաքին մեր Հաճի Օսման. և շատ
պարտք տրվին սակաւ քրիստոնէից և ես տառապեալս՝ տուի
ռալեան 73 ղուրուշ, շատ մարդ պարտական եղեալ ի յօտար յեր-
կիրքն անցեալ և այսպէս նեղութեամբ անցուցեալ տարիս այս։

ՌՄԻԴ (1774) ամին ոչ եղև խաղաղութիւն ընդ ամենայն
15 տիեզերս, զի հրաման Թագաւորին սաստիկ էր. ահն Մօսկոֆին
յոյժ նեղէր ամենայն քաղաք, զամենայն մարդ. զի զօրեղու-
թիւն և արուեստագործութիւն լինէին ամենայն, որ ոչ երթային
սէֆէր։ Եւ ի այս տարիս անհուն մարդիկն բազում մալ և շատ
ձի ջրին տուեալ ի մեծ գետն Թունայ։ Եւ Պոլիս սաստիկ սղու-
20 թիւն եղեալ, որ մինչ երեսուն տիրէմ հացը երկու փարայ եղեալ,
որ խարարն գայր յերկրէ երկիր և ի մեր քաղաքն։ Ի սոյն տա-
րիս սերմանեալ ցորեանն և պտղաբերեալ ծառերն առատապէս
եղեալ. և զապիթ քաղաքին ի հնձոց ժամանակին բերեալ բա-
զում զաղա, վասն ահէն Թշնամեաց, զի մարդիկն երթեալ պա-
25 հէին զգիւղս ի բոլոր քաղաքին։ Եւ ի այս տարիս վասն սալեանի
համար հայերն գանգատ գնացին և այլազգիքն յետ դարձուցին։
Թագաւորութիւն սուլթան Մուսթաֆային և զապիթ քաղաքին
Հաճի Օսմանն. ե ցորենին քիլէն 10 ղուրուշ և եղին օխան 20
փարայ, ամենայն բարի իւր զիյմէթին կէօրէ է։ Եւ այս տարիս
30 տառապեալս տուի ռալեան 63 ղուրուշ, ամեն ըստ կարեաց
տուեալ և հատուցեալ զպարտսն. և անցուցեալ տարիս այսպիսի
նեղութեամբ։

ՌՄԻԴ (1775) ամին ևս առաւել ոչ գոյ երրէք հանդարտու-
թիւն. զի ձմեռն յոյժ ցուրտ. և ի գարնան եկեալ, ի յարևմտից
35 կողմանէն, Սախբը փաշա մի երեք թուղրով, բազում էսքէրով, և
շատ մալով կեցեալ ի քաղաքն մեր եօթ օր, շատ խարճ և շատ
մասրաֆ եղեալ վասն բազում զօրացն. և զապիթ քաղաքին յե-
տոյ ժողովեալ զամենայն գունդս իւր, բաշխ արարեալ զպարտսն
քաղաքին, յետոյ ժողովեալ քրիստոնէից ինը քէսէ ղուրուշ պարտք,
40 որ թէ և թէրով 130 տուն էին, այսմ տարւոջ ոմանք տուին
150 ղուրուշ, ոմանք տուին 100 ղուրուշ և ես տառապեալս տուի
70 ղուրուշ. այսպէս զամենեքեան բռնադատութեամբ պէս պէս
նեղութեամբ հատուցին զպարտս իւրեանց, ոմանք պարտըկան
եղեալ գնացին ի յօտար երկիր, և ոմանք չքաւորեալ փախեան
45 ի յօթևանէն իւրեանց. և բազում էսկէր կայր ի վերայ երկրի
ամենայն տեղիս, շատ ոմանք երթային և շատ ոմանք գային.

և դայր ի Թագաւորէն դապիա ամենայն տեղիս վասն էսկէրի ե
վասն գանձի, յոյժ նեղէին զքրիստոնեայ եղբարքս ի ահէ լէվէն-
տին ե վասն պատերազմի հալածականս շրջէին։ Եւ ի ամառնա-
յին ժամանակին փոքր տղտյոց վրա յոյժ ծաղիկ եղեալ, սաստ-
5 տիկ ցաւոյն բազում տղայս մեռանէին. ե այսպէս անց[ե]ալ տա-
րիս այս դառն նեղութեամբ։

‖ ՌՄԻԵ (1776) ամին ձմեռն ցուրտ և ի գարնան եղև սղութիւն 1181
ամենայն ըտրեաց։ Եւ ի ամառն Թշնամի կողոպտիչ կեայր և ժո-
ղովեալ քաղաքն ամենայն եթէ այլազգ և եթէ քրիստոնեայ դնա-
10 ցին պատերազմ ի վերայ Թշնտմոյն ի գիւղն Կասման և իմաց-
եալ նոյն լէվէնտ վախեաւ / գիւղն Զիմառայ. և այլազգիքն գնա-
ցեալ ի մէջ գիշերոյ որքան Թշնամի կեայր ի մէջ գիւղին զա-
մենեսեան ըմբռնեալ չար մահուամբ սատակեցին, բազում մալս
առին ի նոցանէ և եկեալ ի քաղաք։ Եւ յետ նորա եկեալ ի այլ
15 կողմանէ բազում լէվէնտ վասն սպանման ընկերաց իւրոց
ի գիւղն Կասման, կողոպտեալ զգիւղն, բազում նեղութիւնս
տուեալ մարդկանց։ Եւ կրկին անգամ ժողովեալ քաղաքացիքն
դնացին ի պատերազմ ի վերայ նոցա և Թշնամիքն ըմբռնեալ
զմեծամեծ մարդ քաղաքին շատ նեղութիւն տուեալ նոցա, և
20 քաղաքացիքն ժողովեալ շատ լաթեղէն և երկաթեղէն և շատ
դանձ տուեալ նոցա և ազատեալ. և անօրէնքն զԱստուած ոչ ճա-
նաչելով, որպէս չար Կայէն, գնացեալ անօրէնութեամբ հրով այ-
րեցին ի գիւղն դեղեցիկ Զիմառտ, որ տեսիլեամբ զեղեցիկ է, ի
վերայ դաշտի։ ի միջի նորա եղեալ մարդիկն ոմանք տունով
25 վախեան Պոլիս և ոմանք այս գիւղ և այն գիւղ գնացին։

Եւ ի աշնան ժամանակին եկեալ փաշա մը բազում զօրօք
գիւղն Բինկան և ի ահէ նորա պատրաստեցին կերակուր երեք
աւուր. շատ ձի և շատ խիլատ առեալ տարան ի գիւղն Բինկան,
վասն այնորիկ Թէ ոչ հանդիպի ի քաղաքն մեր։ Եւ պատերազմն
30 Թագաւորաց յոյժ սաստկանայր ընդ Մոսկոֆին։ Ի Թագաւորու-
Թիւն սուլթան Մուսթաֆային և զապիթ քաղաքին մեր Հաճի
Օսմանին. և ցորենին քիլէն 12 ղուրուշ, ամենայն բարին նման-
պէս. և պարտք քաղաքին շատացեալ, զի ոչ կարացին հատուցա-
նել, այլ Թողուցին շահով մէջ քաղաքին։ Եւ մեք երերեալ և տա-
35 տանեալ բազում նեղութեամբ անցուցեալ տարիս այս։

‖ ՌՄԻԶ (1777) ամին և Տաճկաց 1187-ին սաստիկ ցուրտ 1207
և ձմեռն եղև. և ի գարնան ոչ գտեալ հանգիստ վասն խռովու-
Թեան երկրի։ Եւ ես տառապեալս պարտաւորեցայ գնալ ի քա-
ղաքն Պոլիս, ելեալ ի Տիվրիկու բազում նեղութեամբ 5 օր ի
սարս[10] և ի Թուփս շրջելով, վասն ահեն, հուսկ հասայ ի քաղաքն
Սերաստիա, որ շինեալ կայ ի վերայ դաշտի և է փաշայանիստ,
որ տիրէ զօրութեամբ իւրով։ Քաղաքն լի է ամենայն բարու-
Թեամբ ի առս և ի տուրս կատարեալ առատապէս, և կեայր ի
մէջ քաղաքին Էլպէքցի հաճի Ալի փաշա ասի, որ ունէր ի վերայ
45 հազարէ աւելի զօրս իւր, և տէր է որպէս Թագաւոր ի քաղաքն
ամենայն, որ մինչ երթայ ի գուռն Պոլիս։ Շատ անգամ Թագա-

ւորէն մարդ եկեալ ի գլխոյ նորա, ոչ կարէին հնարեօք կտրել։
ղի նա բազում արուեստագործութիւն ունէր, հաւանեցուցանէր
թագաւորն հնարս բանիւք։ Եւ մենք նստեալ ի Սեբաստիա 10
օր. յետոյ գնացեալ ի վերայ դաշտի 8 սէհէթ մինչև Խարդին, որ
5 է գիւղ, ունի և ի վերայ դաշտի մեծամեծ արտօրայս և ինքն
ճանրայէն սակաւ հեռի, և կայ ի քով նորա բարձրագոյն լեռն,
որ ասի Եըլտըզ-տաղի. և Խարդնու ելեալ գնացինք ի լեռն, որ ասի
Ղուրթ-պէլի, ի յէնիշս և ի եօղուշս տասը սէհէթ մինչև Թօղաթ.
և Թօղաթ գեղեցիկ քաղաք, լցեալ ամենայն բարութեամբ առա-
10 տապէս, բազում վաճառական երթայ ամենայն կողմանց և առ-
նու շատ մէթահս ի նմանէ և մարդկանց վայելչութիւնն և վարքն
նմանի Ըսթամպօլու, և ունի շատ խաներ, ի առս և ի տուրս կա-
տարեալ առատապէս։ Եւ ելեալ Թօղաթու գնացանք ի դաշտս, որ
ասի Ղազ-օվա և Մալ-թէպէ, անցեալ և սակաւ ի մէջ օրմանի,
15 և կոյ ի վերայ ճանապարհին պէքճի, որ ասի Զէնկէլլի-բէլ, և էր
ինը սէհէթ մինչև Թուրխալ։ Եւ Թուրխալ է գիւղ այլազգից և
ունի սակաւ շուկայ վասն ճանապարհորդաց կերմանի համար։
Եւ անտի ելեալ գնացինք ի լեռս և անցեալ Ինճէ-բաղար խանն,
գնացինք ի յէնիշս ութը սէհէթ մինչև Ամասիա։ Ամասիա է քա-
20 ղաք ի մէջ լեռան և ունի ահագին և բարձրագոյն և ջուրահայ-
եաց բերդս զարմանալի, և ունի բազում այգիս և թութլուխս,
վասն ապրըշմայ համար, և ունի գեղեցիկ երկու փոքր եկեղեցիս.
և աշըխ Վէրհէտին, որ բազում աշխատանս կրեալ և շատ լեռս
ծակեալ վասն միոյ աղջկան համար և ոչ առեալ մուրադ, որ
25 ամենեքեան մարդ գիտէ[11]։ Եւ տյս դաշտ է ի հոն կատարեալ ան-
հուն ժամանակաց, և ունի խաներս, և չարշը պազարս. անցանի
ի մէջ քաղաքին բազում ջրով գետս. և ելանէ քաղաքէն մէթահ,
ապըրշում և բարեհամ դինի։ Եւ ելեալ անտի գնացինք ի դաշտս
տասը սէհէթ մինչև Մարզուան և է դասապայ, և ունի խաներ և
30 չարշը պազար, և ունի փոքր եկեղեցի. և ելանէ մէջէն մէթահ
տիմի, բարձի երես, և նա ևս ունի բարեհամ գինի։ Եւ անտի
ելեալ գնացինք ի դաշտս երկու սէհէթ մինչև Հաճի գիւղն, և նա
մեծ գիւղ է այլազգից։ Եւ անցեալ անտի գնացանք ի դաշտս և
սակաւ ի էնիշ և ի եօղուշ տասը սէհէթ մինչև յՕսմանճուխ։ Եւ
35 Օսմանճուխ է մեծ գիւղ այլազգից ի մեծ լեռան տակ, և անցանի
յառջևէ նորա մեծ գետ, և ունի ի վերայ ջրին տասն և երկու
արշին երկայնագոյն գեղեցիկ կարմունջս, և ունի սակաւ չարշը,
և ի միջի մարդ նորա չար, որպէս Կայէն, որ բազում չարու-
թիւն արարեալ են հանդիպող սակաւ ճանապարհորդին։ Եւ անտի
40 ելեալ գնացինք ի լեռն բարձրագոյն, որ ասի Սարմաշուխ. բա-
զում աշխատանս կրեալ և իջեալ ի վայր սակաւ գնացինք ի
դաշտս ութը սէհէթ մինչև Հաճի-Համզա. և է գիւղ այլազգից ի
մէջ հիսարի, և ունի բազում պաղճաներս և սակաւ շուկայ բա-
զար, և ելանէ ի մէջէ նորա անուշահամ ըսէջել գեղեցիկ։ Եւ անտի
45 ելեալ և բազում աշխատանս կրեալ և անցեալ ի մեծ գետն, որ
ասի Տէլի Տէվրիշ, և գնացինք հանդարտ ութը սէհէթ մինչև Թօ-

սիա։ Եւ Թօսիա է մեծ դասապայ և ունի շուկայ բաղար, խան. և
ելանէ ի մէջէ նորա դեղեցիկ բրինձ և ալաճա շալ, և մարդիկն
նորա եմեն անուշահամ փիլաւ։

|| Եւ ելեալ անտի գնացինք ի դաշտ անհուն, և անցեալ 1208
5 Ճիվէ-բաղլարին, շատ ճանապարհ կտրելով տասն երկու սէհէթ
մինչև Ցօմէլուն, որ գիւղ է այլազգից, և ունի դաշտս մեծամեծ
արտօրայս, և կայ ի մօտ նորա դասապայ, որ ասի Ղօճայ-Հիսար,
և ունի ի վերայ դաշտի շատ դիւգօրայս։ Եւ անտի ելեալ գնա-
ցինք ի սարս և ի Թուփս, նեղութիւնս կրելով անցանք 10 սէհէթ
10 մինչև Ղարաճալար. և նա է մեծ գիւղ. և ունի մեկ խան, և իւր-
մէն ելանէ շալ գօտիս, և մարդ նորա է անօրէն։ Եւ ելեալ անտի
գնացանք երկու սէհէթ մինչև Ջէրքէշ. և նա գիւղ է ի վերայ
դաշտի և ի մէջ հիսարի, և ունի ոտկաւ խանութս, և գայ ի այս
գիւղէ գեղեցիկ և անուշահամ իւղ և մեղր, որ է լայիի Գոլիսու,
15 որ բաղում մարդիկք տանին։ Եւ անտի գնացեալ ի լեռն մէջ
օրմանի տասն և երկու սէհէթ մինչև Բայընտրը, և նա գիւղ է
սակաւ ի մէջ տէրէի, և ունի սակաւ ջուր, ի յառաջէն անցանի, և
մարդիկք խիղարեն տախտակ և տանին։ Բայընտրու ելեալ գնա-
ցանք ի լեռս և ի դաշտս բաղում ճանապարհս կրելով տասն և
20 երկու սէհէթ մինչև Կէրէտէ. և նա է մեծ դասապայ, և ունի շու-
կայ բաղար և խան, և ունի մէջ իւր զընտան. և ի նմանէ ելանէ
գեղեցիկ սաղթիան և սաղրի և հիլալի միջի նորա ելանէ, ի առս և
տուրս կատարեալ։ Եւ ի սմանէ ելեալ գնացանք ի դաշտս բաղում
և կայ այստուս և այնտուս գիւղօրայս։ Եւ անցեալ ի Ղազայ-կէօլին
25 տասներեք ժամ մինչև Գոլի. և սա է դասապայ ի վերայ դաշտի,
և ունի խաներս և չարշը պազարս. և կայ ի մօտ նորա դարլըճա,
որ գետնին ներքևէն ելանէ տաք ջուր, և շինեալ մարդկանց
ի վերայ նորա քարեղէն տունս և խիթեալ բաղում մարդիկ
լուացուին և զանուն նորա կոչեն Թանդրը-համամի։ Եւ ելեալ
30 անտի գնացինք ի լեռն ի մէջ մեծամեծ ծառերուն, որ երկինքն
չի երևիր։ Եւ անցեալ ի Տարիճէ տասն և երկու սէհէթ մինչև
Տիւզճէ։ Տիւզճէ գիւղ սակաւ, գիւղ է այլազգից ի մէջ օրմանի
և ի մեծ ձորի, և ունի սակաւ խանութ վասն ճանապարհորդին.
և ուրբաթ օրերն բաղար դուրուլմիշ կըլլոյ, բազում տեղեաց
35 բերեալ մէթահ ծախեն զօրն այն։ Եւ Տիւզիճէու ելեալ գնացանք
ի դաշտս ի մէջ օրմանի, որ է Կիւմիւշ-օվայ և Է'լրի-տէրէ, որ
է իւրա աւազակաց, զի բաղում մարդիկ է լացուցած, և սոսկալի
ճանապարհս այս տասն և երկու սէհէթ մինչև Խէնտէկ. և նա է
մեծ գիւղ, և ի միջի մարդ նորա չար, բազում ՇՆաս առնեն ճա-
40 նապարհորդաց։ Եւ անտի ելեալ և բազում աշխատանս կրեալ
վասն ճանապարհն չամուռ լինելոյ, զի մէնշուր է նորա չամուռն,
զի շատ ձի պաթմիշ եղեալ է և գիժվար ճանբան. նեղութիւնս
կրելով տասը ժամ մինչև Սապանճա. և Սապանճա է դասապայ
ի մէջ օրմանի, և ունի սակաւ ծով և սակաւ շուկայ բաղար, և
45 ունի պախճայներ բաղում, և անհուն կեռասի ծառեր, որ տանին
մարդիկն զպտուղ նորա ի Կոստանդիա։ Եւ անտի ելեալ գնացաք

ի դաշտս յինն ժամ մինչև Իզնիմիտ. և Իզնիմիտ է քաղաք ի
ծովհայեաց, զի Ովկիանոս ծովուն մէկ գլուխն գայ ի հոն դադրի,
և նստի ի քաղաքին կէօմբիւքճի, և ունի խաներ, և չարշը բա-
ղար լցուի ամենայն բարութեամբ, և իւրմէն ելանէ շատ մէթահ.
5 Եւ անտի գնացաք հանդարտ ութը ժամ մինչև Կէյպիզէ. և Կէյ-
պիզէ է դիւղ ի թէվիէի միոյ, և ունի սակաւ շուկայ, և ունի գե-
ղեցիկ ճամի ի թագաւորական ցեղէն շինեալ։ Եւ անտի գնացաք
չորս ժամ մինչև Փէնտիկ, Գարթալ և անտի մինչև յԻիւսկիւտար,
որ է Պոլիս։ Եւ կայր ի վերայ ճանապարհին բազում անուանի
10 լեռս և բազում անուանի դիւղօրայս և անուանի յոյժ տեղիս, և
մեք ոչ դրեցինք զամենեսեան, զի ձանձրութիւն չը լինի ընթեր-
ցողաց և լսողաց։ Եւ տառապեալս ուրախութեամբ հասեալ ի
քաղաքն Պոլիս և գտեալ հանգիստ, որ է առհասարակ ամենայն
քաղաքաց մայր, լի և առատ, գեղեցիկ և ի ամենայն առուտուրս,
15 բացուի քսան ու չորս դուռս ի ծովհայեաց, որ եկեալ մեծամեծ
և ահագնատեսիլ և զարմանալի նաւով բերեալ բազում և անհուն
վասն անթուելի և անհամար մարդկանց, առևտուրս կատարեալ
առատապէս, գեղեցկաշէն և բարձրագոյն շինուած է ի ծովհայեաց
ամեն կողմանց, և վայելչութիւն ամենայն ազգաց առհասարակ
20 ուրախութեամբ, խնդութեամբ է։ Եւ ի տարիս այս, ի մայիս
ամսոյ, սուլթան Մուսթաֆա || մեռեալ և սուլթան Համիտ ի գահն 1209
նստեալ դղրդեցաւ Պոլիս. այնպէս շարժուն եղև ամենայն արանց
և կանանց և ազգաց, ուրախութիւն եղև, վասն նստելոյ ի թահթն
սուլթան Համիտ, զի ոչ ուզէին յառաջագոյն զսուլթան Մուս-
25 թաֆա, վասն այնորիկ յոյժ խնդութիւն եղև ամենայն ազգաց։
Եւ նոյն ամառն թագաւորն ժողովեալ զամենայն զօրս իւր խոր-
հուրդ արարեալ վասն պատերազմին Մոսկոֆի. և յետոյ հաշտե-
ցան ընդ իրեարս, և զօրքն այլազգաց բերին Սանճաղը Շէրիֆն
ի Պոլիս, որ որոտումն եղև արանց և կանանց. որքան այլազգ
30 կար ի Պոլիս ամենեքեան գնացին ի դէմ նորա և երկիրպագին
և տարին ի պալատ թագաւորին, և մէօհիւրն էր Իզզէթլի Ահմէտ
փաշայն, որ էր արիւնասէր, շատ հացագործ և պախալ կախեալ
էր բարկութիւն նորա։ Եւ յայսմ ամի Գրիգոր պատրիարքն
սիւրկիւն արին[12] և Զաքարիա վարդապետն պատրիարք[13] արար-
35 եալ ի յաթոռ նստուցին։ Եւ ի նոյն ամառն հրկիզութիւն եղև
Մահմուտ փաշան[14] 12 ժամ, բազում մալս և շատ տեղիս աւերե-
լով, որ մինչև Հօճա փաշա[15] տայանմիշ եղաւ. և տառապեալս ոչ
կարեմ գովել զվարքն և զվայելչութիւնն. և զամենայն եղեալ
իրան, որ ոչ կարացի պատմել, անմեղադիր լերուք, գնացող
40 տեսող եղբարք։

Ռմիե (1776) խաղաղութիւն երկիրն ամենայն և Պոլիս լի-
ութիւն և առատութիւն ամենայն բարեաց, ևս առաւել որ հաշ-
տեցան ի հետ Մոսկոֆին. ամենայն ամիս գայր բազում կէմիս
ի նոցանէ, որ բերէին բազում բարիս։ Եւ ի գարնանային եղա-
45 նակին եկաւ Մոսկոֆին էլչին շատ ապրանքով, և մտեալ ի քա-
ղաք մինչ ի դուռն թագաւորին. յետոյ խորհեցաւ ի հետ արքա-

յին, որ Ատամպօլու մէջ որքան դերի կայ ի ձեռս այլազգաց աղա-
տեսցէ գնոսա և արքայն հաւանեցաւ և հրաման ետ, զի ուր ուրէք
գտանի ժողովեալ առ ինքն առաքեսցեն մինչև ութ ամիս։ Այս-
պէս ժողովեաց բազում գերիս, եթէ աղջիկ և եթէ կին և թէ այր,
յառաջնմէ եկեալ և այլազգ եղեալ, նոքա ևս տարան առ էլչին։
Եւ էլչին միաբանեաց զամենայն և լցու նաւս երիս և ուղար-
կեաց յիւրաքանչիւր յօթևանս։ Եւ որ կեայր յառաջագոյն Մը-
սրրայ, որ անուամբն Ալի պէկ ասի, նման թագաւորի, տիրէր զեր-
կիրն իւր և կտրած ստակն տարածեցաւ զերկիրն ամենայն, մարդ
ոչ կարէր ի վերայ նորա մտանել։ Եւ թագաւորն իմացաւ և
փաշա թային արար ի վերայ նորա։ Եւ նա գնաց բազում զօրօք
և արուեստիւ բերեալ զնա. և անհուն ապրանքս և փոքրիկ երկու
տղայներ բերին ի Պոլիս։ Եւ մինն ի խորհրդակցաց նորա, որ
ասէին Թահիր Էօմէր, նա ևս Եաֆա նստեալ էր, և շրջէր ի վերայ
ծովուն չար աւազակութեամբ, յահէ նորա կէմի ոչ երթայր և
գայր ս. Երուսաղէմ, նա ևս իմացաւ, զնա ևս բնաջինջ արար։

Ցայսմ ամի Երուսաղէմայ Պօղոս պատրիարք[16] վախճանելով
Յովակիմ վարդապետն[17] ի յաթոռ նստաւ։ Ի Պոլիս հրկիզութիւն։

ՌՄԻԶ (1777) Ըստանպալ խաղաղութիւն, լիութիւն և առա-
տութիւն ամենայն բարեաց, խնդութիւն և վայելչութիւն գեղե-
ցիկ ամենայն ազգաց, արանց և կանանց։ Եւ ի դիլգատէ ամսոյն
ձմեռնային ժամանակին եղեալ սուլթան Համիտն դուստր մի, և
շատ ուրախութիւն եղև քաղաքին ամենայն ազգաց, ես առաւել
հրաման եղև է (7) օր և է (7) գիշեր տօնանմա լինելու, զի յա-
ռաջագոյն պատրաստեալ էին զամենայն արուեստագործութիւնն,
զարդու զարդարեցին Պոլիս քաղաքն ամենայն, եթէ աղքատ եթէ
հարուստ ուրախութեամբ և ցնծութեամբ զարդարեցին այնանե-
րով և պատուական անգին քարերով, տեսակ տեսակ պատկեր-
ներով, կերպ-կերպ նախշներով, եթէ փտյտեղէն և թէ թղթեղէն,
պէս-պէս զանազան արուեստագործութեամբ շինեալ մարդկանց։
Եւ ես տառապեալս շրջագայելով տեսանէի զամենայն և փառս
տայի Աստուծոյ, որ մարդուս այսպիսի հնարագիտութիւն տուեր
է։ Եւ երկու տեղիս տեսի, որ մինն մարդու կերպ շինեալ և մինն
գազանի կերպ, որ ամեն մարմինն լման և մարդուն ձեռքն գիրք
տուեալ՝ երկու պրկունքն շարժելով և գլուխն երերեցնելով կար-
դայր. այսպէս տեսի, և սորին նման և այլ բազում գործս ասեն
զարմանալի, որ տեսանողն սքանչացեալ և փառաւորեալն Աստ-
ուած փառաւորեցաւ։ Զարդեցաւ քաղաքն Պոլիս, շարժուն և որո-
տուն եղև վասն ամբոխին՝ || արանց և կանանց, և բազում մե- 1210
ծամեծ մարդիկ վկայեցին, թէ զի ոչ ոք եղած այլ թագաւորաց
այսպէս տօնանմա, սոյնպէս և Գ (3) գիշեր ի վերայ ծովու գործս
պատրաստեցին բոցեղէն իւղով և մահիթապով, զարմանալի գործս
ասեն՝ նետելով ի վեր երկնից ելանէր բարձր ի հաւան և տա-
ղըլմիշ ըլլար որպէս զաստեղս երկնից. սորին նման պէս-պէս
բազում գործս ասեն ի դէմ թագաւորին ի վերայ ծովուն։

Եւ ի այս տարիս բաղմացեալ էր չար անուն լէվէնտն ամե-

նայն տեղիս, և ի նեղութենէ նորին եկեալ բաղում քաղաքաց մարդ արզուհալ տալով թագաւորին. և թագաւորն իմացաւ և հրաման արաւ, ոլորտս տիեզերաց ֆէրման ղրկելով քաղաքաց քաղաքաց, թէ զի ոչ գտանի անունն նորին, այսինքն նէֆրան
5 լինելով տարածուեցաւ երկիրս ամենայն, թէ յարեալս եթէ արևմուտս ամենայն քաղաք պատերազմեալ ի հետ թշնամեաց, և գլուխ նոցա բերեալ ի Կ. Պոլիս։ Տարի մը այսպէս ոչ պակաս եղեալ ի դրանէ թագաւորին, և նոյն տարին մէօհիւրն էր ի ձեռն Տէվրիշ Ահմետ փաշային։ Եւ ի այս տարիս մեր զապիթ Հաճի
10 Օսմանին տղին դրին զանունն Մուսթաֆա փաշա, որ ամենայն բանի հախին կուգար և մեր ազգին տիրութիւն կանէր, որ խապարն գայր Պոլիս։

ՌՄԻԷ (1778) ամին խաղաղութիւն, լիութիւն լցեալ ամենայն բարօք, զի եկեալ Մոսկոֆէն բաղում նաւ բերեալ անհուն
15 բարիս, վասն անթուելի մարդկանց։ Եւ ի մէջ ամառնային ժամանակին սուլթան Համիտին եղեալ արու զաւակ և դրին զանուն նորա սուլթան Մահմուտ։ Ուրախութիւն եղև ամենայն ազգաց, կրկին ես հրաման արարեալ վասն տօնանմա լինելոյ, եօթը օր և եօթ գիշեր զարդով զարդարեցին Պոլիս եօթնապատիկ քան զառաջինն, և որոտումն եղև վասն անհուն անթուելի արանց և կանանց և զանազան օյինրազներաց և արուեստագործաց. վասն զի ոչ կարացաք պատմել մի ըստ միոջէ վասն տկարութեան մտաց մերոց, զի տեսանողն զարմացմամբ սքանչացաւ և փառաւորեալն Աստուած փառաւորեցաւ, որ այսպիսի հնարագիտութիւն տուեր
25 է մարդուս։ Նմանապէս երեք գիշեր ի վերայ ծովուն նետելով, չուան ի վերայ խաղալով, պէս պէս մարիֆէթով բոցեղէն իւղով նետելով ի վեր երկնից ելանէր հավան և տուղրլմիշ ըլլար անհամար հազար ի դէմ թագաւորին։

Եւ նոյն ամառն հրկիզութիւն եղև բաղում տեղիս։ Եւ ի դէպ
30 աշնան կրկին եղև արու զաւակ և դրին զանուն նորա սուլթան Ահմէտ. և թագաւորն հրաման արար, զի պատրաստեսցեն Փաշային դուռ բաղում բրինձ և շատ իւղ, զի Պոլիս որքան մլքթէպ կայր, առեալ հօճայներն զփոքր տղայքն կարդալով, ամին ասելով, բերելով ի դուռն Փաշային և նստեալ ուտէին զփիլաւն. և
35 տղոցն տային տասնական փարայ և հօճայներուն մէյմէկ ֆէրէճէ հագուցանէին, այսպէս հրաման եղև 5 օր, որ դղրդիւն եղև ի Պոլիս տղայոց ձայնէն կարդալով և շատ աղքատս կերակրելով։ Եւ սորա տօնանման այսպէս եղև. և մլօհիւրն տուեալ էր Տէվրիշ Ահմէտ փաշային. բաղում մարդիկ վկայեցին թէ 100 քէսէ ստակ
40 գնաց։

ՌՄԻԸ (1779) ամին լիութիւն և առատութիւն եղև Պոլիս և ի գարնան ժամանակ տղայոց վրայ ծաղիկ եկեալ բաղումս կոտորէր։ Եւ նոյն ամսոյն Հինտու եկեալ փոքր ֆիլ մը ի Պոլիս, ամբոխն դիմեաց ի սէիր։ Նոյն տարին Բաղտատու փաշան Ահէ-
45 մուն հետ սէֆէր բացաւ և շատ գլուխ Պոլիս ղրկեց։ Նոյն տարին անթիւ չէքիրկէ եկն ի Պոլիս և այս տարիս այսպէս անցաւ։

ՌՄԻԹ (1780) ամին լիութիւն և առատութիւն եղև ի Գոլիս. և
ամառն[ային] ժամանակ յոյժ բարկացաւ Աստուած և մահ սաստիկ անկաւ ի Գոլիս, որ կոտորէր ծեր և տղայ առհասարակ և բազմացաւ խղճութիւն ի Գոլիս, որ ոչ կարեմ պատմել, զի մեր զարիր
5 եղբայրները ս ոք հիւանդանայր կամ մեռանէր, ոչ ոք երթայր առ նոսա և կամ թաղէր զդիակս նոցա. մարդասէրն Աստուած իւր անհուն ողորմութեամբ փրկեաց զիս ի մահուանէն. Եւ ելի ի Գոլսոյ ե եկի ի քաղաքն մեր Տիվրիկ. Եւ Տիվրիկ էր սղութիւն՝ ցորենին քիլէն 14 ղրուշ էր. Եւ ի նոյն տարին շարժումն եղև
10 երեք օր ի մեր քաղաքն և Մալաթիա, բազում տեղիք քայքայեալ և շատ մարդիկ անկան ի հողին ներքև. Եւ նոյն տարին արևելեան կողմն շարժումն եղև և ՀԷաս արաօրէից.

|| ՌՄԼ (1781) ամին խաղաղութիւն և առատութիւն եղև և 1211
ձմեռն սակաւ սաստիկ, ի գարունն ոչ ցօղեաց անձրև, վասն
15 այնորիկ թէ Տաճկաց և թէ քրիստոնէից մանկտին երեք օր տուփա ըրին, և քրիստոնեայք երկու եզ առնելով Աստուածամօր հսկում գնացին, և յորժամ զենին, հրամանաւ Աստուծոյ, առժամայն եօթը օր և եօթը գիշեր անձրև տեղաց և ցորենին քիլէն 4 ղրուշ իջաւ և տասներեք օխան շիրան 1 ղրուշ կուտային. Եւ
20 Մուսթաֆա փաշան էր զապիթ քաղաքին, որ շատ գութ ունէր Հայոց վրայ և այս տարիս այսպէս.

ՌՄԼԱ (1782) ամին խաղաղութիւն և լիութիւն եղև, ձմեռն սաստիկ. և ի սաստիկ ցրտութենէ ծառերն չորացան և փայտին բեռը 30 փարայ էր. Սոյն տարիս մուրատոզ ելայ, իմ Գոհար
25 ընտանին առ Աստուած փոխեցաւ և դասը անցնելու և կարդալու հետ մնայի. Այս տարիս Մուսթաֆա փաշան Կիւմիւշխանէ գնաց և քաղաքն Տէլի Մէհմէտին ձեռքը մնաց. գործը ինչ գործելն ոչ գիտէր. սայեան եղաւ 150 տուն հայերուն տասը քէսէ, և հինգ քէսէ քաղքի օրթայ խարճ, և ցորենին քիլէն 10 ղրուշ, և սակաւ
30 մարդ մեռաւ.

ՌՄԼԲ (1783) ձմեռը սաստիկ եղև և մարտ ամսոյն օր մը, գիշեր մը անդադար ձիւն եկաւ, որ մինչև ամիս մը չոր ցուրտ եղաւ, ծառերն պղեցան սաստիկ ցրտոյն. և ի ձմեռն եղև ծազիկ տղայոց, որ զրաղումս կոտորեաց. Եւ փաշան կրկին նստաւ
35 Կիւմիւշխանէ, և քաղաք Տէլի Մէհմէտին ձեռքը մնաց, որ հինգ տարեկան տղայոցմէ լման խարաճ կառնէր և մարդ չէր կարէր հետը զրուցել.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նաղբում սխալմամբ գրված է ՌՃՇԷ (1187), ուղղեցինք «ՌՃՁԷ»։

2. Այդ տարիների սովին և թանկությանն է վերաբերում 1743 թ. կարինի Հնձուց գյուղում գրված մի ձեռագրի հիշատակարանի տվյալները «Թվին ՌՃՂԲ (1743)-ին սղութիւն եղև մինչ որ Դ (4) տարի. Ա (1) սմար ցորեն Ը (8) դրուշ մինչև Ժ (10) և ԺԲ (12) եղև դինն, Բ (2) ձու՝ Ա (1) փարայ, ան այլ չկայր, Բ (2) սմմոանոց ջրվալ յերթ Ա(1) դրուշ» (№ 3389, էջ 326ա)։

3. Բնագրում հրատարակիչը փակագծերում ավելացրել է «Տիւրիկոյ»։

4. Այսինքն 1760 թվի ապրիլի 2-ին։

5. Բնագրում գրված էր «էշերն», միաքն անիմաստ է մնում, ուստի ուղղեցինք «լէշերն», որը համապատասխանում է պատմածի բովանդակությանը։

6. Բնագրում «ի»-ն կրկնված է։

7. Հրատարակիչը փակագծերում ավելացնում է «քաղքին ծայր»։

8. Հրատարակիչը փակագծերում նշել է «բուրդ»։ Ջաղանները քրդական ցեղերից էին

9. Խոսքը վերաբերում է 1787—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմին, որի մասին ուրիշ հիշատակություն դանում ենք Մոսկվայի Վ. Ի. Լենինի անվան Պետ. հանրային գրադարանի հայերեն ձեռագրերի ֆոնդի ձեռագրերից մեկում. այնտեղ կարդում ենք. «Թվին ՌՌՃԻԳ (1774)-ին յօլիսի ԻԸ (28)-ին, որ Ըսմանլոն Մօսկօվի հետ բարեշեցաւ, որ թաթարքն ծեծկվեցաւ, որ կոյտիրեց թաթարքն»։ (Арм. 6, ձեռագիրը համայիլ է, երկար և նեղ թուղթ, վերջում՝ հիշատակարանից հետո, ավելացված է այս տեղեկությունը)։

10. Բնագրում տպագրական սխալի պատճառով գրված է «սորոն»։

11. Իմա Ֆահրատի և Շիրինի պատմությունը, որը, ինչպես տեսնում ենք այս տեղեկությունից, տարածված է եղել նաև Ամասիայի կողմերում։

12. Հեղինակը նկատի ունի Կ. Պոլսի պատրիարք Գրիգոր Պատմաճյանին։

13. Իմա Զաքարիա Կաղղվանցի, Կ. Պոլսի պատրիարք։

14. Կ. Պոլսի թաղերից մեկը։

15. Կ. Պոլսի թաղերից մեկը։ Բաղդասար Գպիրն իր ժամանակագրության մեջ հիշում է այս թաղամասում ավելի վաղ պատահած հրդեհների մասին (տես Մծ, 1, էջ 338)։

16. Իմա Պողոս Գ. Վանեցի, Երուսաղեմի պատրիարք։

17. Իմա Հովակիմ Քանաքեռցի, Երուսաղեմի պատրիարք։